Հաշմանդամության գնահատման և համապատասխանության որոշման վերաբերյալ մարդու իրավունքների մոտեցման լավագույն միջազգային փորձը

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝ Մարդու իրավունքներ և հաշմանդամություն
Իրականացման ժամկետ՝ 2018թ. փետրվար-սեպտեմբեր
Աջակցության ձև՝ Միջնաժամկետ փորձագիտական առաքելություն

Շահառու մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Ծրագրի նկարագրություն

Նպատակ՝ Հաշմանդամության գնահատման և համապատասխանության որոշման համար նոր քաղաքականություն ու մեթոդաբանություն ներկայացնելու նպատակով ԱՄՀՆ-ի և այլ շահագրգիռ մարմինների կարողությունների հզորացում՝ հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված ֆունկցիոնալության միջազգային դասակարգման մոտեցմանվրա և համապատասխան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին:

Հատուկ նպատակներ՝

1. Բարելավել քաղաքականություն մշակողների և միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամների գիտելիքները Կիպրոսում և Հունաստանում կիրառվող Ֆունկցիոնալությանմիջազգային դասակարգման վրա հիմնված հաշմանդամության գնահատման և համապատասխանության սահմանման լավագույն միջազգային փորձի վերաբերյալ:
2. Վերանայել հաշմանդամության գնահատման և համապատասխանության սահմանման ալգորիթմները՝ հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիոնալության միջազգային դասակարգման վրա՝ Կիպրոսում կամ Հունաստանում դրա գործնական հետևանքների մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար:
3. Աջակցել միջգերատեսչական աշխատանքային խմբին՝ վերանայելու իրենց մոտեցումը ու վերափոխելու տեղեկատվության հավաքագրման մեխանիզմները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան :
4. Նոր մոտեցման վերաբերյալ հանրության իրազեկում՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա:

Ակնկալվող արդյունքներ՝ Ծրագիրն ուղղված է հետևյալ արդյունքների ձեռքբերմանը.

1. Ներգրավված նախարարությունների քաղաքականություն մշակողները և միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամները պետք է հստակ պատկերացում ունենան Ֆունկցիոնալության միջազգային դասակարգման իրական արդյունքների մասին՝ հիմնված ԵՄ երկրներում, մասնավորապես՝ Կիպրոսում և Հունաստանում կիրառվող հաշմանդամության գնահատման և համապատասխանության սահմանման չափորոշիչների վրա:
2. Ներգրված նախարարությունների քաղաքականություն մշակողները և միջգերատեսչական աշխատանքային խմբի անդամները պետք է ունենան Հայաստանում հաշմանդամության որոշման և համապատասխանության սահմանման վերանայված նախագիծ՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա:
3. Վերանայված մոտեցումը պետք է հաջողությամբ փորձարկվի առաջին անգամ հաշմանդամության կարգավիճակի դիմած շահառուների շրջանակներում՝ սկսված 2018 թվականից:
4. Հաշմանդամության որոշման և համապատասխանության սահմանման բարեփոխված մոտեցումը հանրությանը պետք է փոխանցվի ԵՄ երկրների, մասնավորապես Կիպրոսի և Հունաստանի հաջողված օրինակների կիրառմամբ: